Известия НАН РА, Науки о Земле, 1998, LI, *№1-2, 135-138*

КРАТКИЕ СООБЩЕНИЯ

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԿԱՏԵԳՈՐԻԱ

© 1998 թ. Լ. Հ. Վալեսյան, Ք. Ս. Բեժանյան

Ереванский государственный университет, Армения
375025 Ереван, ул.Алека Манукяна, 1, Республика Армения
Поступила в редакцию 23.09.97

«Միայն իր սահմաններում և շնորհիվ իր սահմանների ինչ-որ բան այն է, ինչ-որ նա կա» (Հեգել):

Սահմանների կատեգորիան համագիտական է: Դրանց հետազոտությամբ զբաղվում է լիմոլոգիա (լատ. limos – սահման) գիտությունը:

Աշխարհագրությանը հետաքրքրում է այն սահմանները, որոնք կարող են դրսևորվել տարածության մեջ: Աշխարհագրական սահմաններ են համարվում այն գծերը կամ անցումային գոտիները, որոնք ընկած են նույնատիպ կամ տարաբնույթ տարածական օբյեկտների միջև և բաժանում են դրանք իրարից: Սահմանները աշխարհի դիսկրետության կամ իրականության դիսկրետ ընկալման արդյունք են, իսկ դիսկրետ ընկալումը կարող է դրսևորվել գրավոր կամ բանավոր խոսքի միջոցով, ուստի սահման կարող են ունենալ բոլոր այն երևույթները, որոնք անվանում ունեն [10]:

Սահմանները տեսական աշխարհագրության թույլ ուսումնասիրված ոլորտ է: Դրա պատճառներից է այն, որ սահմանների կատեգորիան գիտության բարդ կատեգորիաներից է և հարուստ է հակադրություններով ու պարադոքսներով:

Նշենք դրանցից մի քանիսը:

Ինչքան էլ մենք փորձում ենք տարածությունը ընկալել դիսկրետ ձևով, միևնույն է, այն անընդհատ (կոնտինուալ) է, այնտեղ անընթացող բոլոր երևույթները գտնվում են փոխադարձ կապերի մեջ և գոյացնում են մեկ ամբողջություն: Դա նշանակում է, որ կոնտինուալությունը և դիսկրետությունը միմյանց լրացնող դյուրթներ են [6]: Ուստի տարածքը, աշխարհագրական միջավայրը մի դեպքում կազմված են օբյեկտներից, հետևապես և սահմաններից, մեկ այլ դեպքում կոնտինուալ է և անտեսում է սահմանների գոյությունը:

Մեկ այլ պարադոքս: Որևէ տարածք կամ աշխարհագրական երևույթի կառուցվածքայնությունը ապացուցվում է կառուցվածքային(ֆունկցիոնալ) միավորների և դրանց փոխադարձ կապերի բացահայտման միջոցով: Ընդունվում է այդ միավորների (կոնստրուկտների), հետևապես և դրանց սահմանների օբյեկտիվ գոյությունը: Այդպիսի միավորներ են, օրինակ, բոլոր տեսակի բնակտարածքային համալիրները, այդ թվում նաև լանդշաֆտները: Բայց միաժամանակ համարվում է, որ սահմանները օբյեկտիվ իրականություն լինելով հանդերձ, շատ հաճախ արտահայտվում են պայմանական, ոչ ռեալ գծերով կամ շերտերով: Ստացվում է, որ օբյեկտիվորեն գոյություն ունեցող ֆենոմենը (շրջանը, լանդշաֆտը) բացահայտվում է ոչ որոշակի, ոչ ռեալ սահմանի միջոցով [8]:

Այս պարադոքսը հայտնի է օբյեկտիվության և ռեալության պարադոքս անունով:

Մեր պատկերացումները սահմանների մասին հենվում են դրանց քարտեզագրական պատկերման վրա, որը նույնպես հանգում է պարադոքսի: Դա

նման է օբյեկտիվության ու ռեալության պարադոքսին: Այս դեպքում էլ սահմանները արտահայտում են, բայց չեն արտահայտվում, պատկերում են, բայց չեն պատկերվում: Սահմանների հիմնական որակական հատկանիշները (կտրուկություն, հստակություն, արտահայտվածություն, հակադրելիություն և այլն) քարտեզի վրա հազվադեպ են դրսևորվում, քանի որ դրանք լոկ օժանդակ ֆունկցիաներ են կատարում [10]:

Քարտեզագրական պատկերման պարադոքսը կայանում է հենց նրանում, որ շրջանացման քարտեզները ամբողջապես բաղկացած են սահմանային գծերից, բայց բուն սահմանները իրենց որակական հատկանիշներով պատկերված չեն: Դրանք կոնկրետացնում, որոշակի են դարձնում տարածական երևույթները որպես պարզ համակարգեր, ընդգծելով դրանց ներքին կապերի միասնականությունը: Ուստի սահմանների բացահայտումը և քարտեզագրական պատկերումը աշխարհագրական հետազոտությունների անհրաժեշտ փուլն է:

Աշխարհագրական սահմանները հատուկ նշանակություն են ստանում շրջանացում կատարելիս, որը, ինչպես հայտնի է աշխարհագրական հետազոտությունների մեջ առանցքային դեր է կատարում [12]:

Շրջանացման գործընթացում երկու մոտեցում է դրսևորվում դեպի սահմանը: Առաջին մոտեցման դեպքում սահմանները հանդես են գալիս որպես շրջանը որոշող, կոնկրետացնող գործոն: Սահմանը աշխարհագրական շրջանի արտաքին անմարմին թաղանթն է և արտահայտում է դրա արտաքին ձևը: Երկրորդ դեպքում սահմաններն իրենք շրջանաստեղծ դեր են ստանձնում և դառնում են շրջանացման գործընթացի և որակական ֆոնի եղանակով իրականացվող քարտեզագրական աշխատանքների որակական մասը: Ուսումնասիրվում է սահմանների ազդեցությունը սահմանազատված օբյեկտների փոխհարաբերությունների վրա, նրանք ոչ միայն բաժանում են կից շրջանները, այլև շփման զոնա են ծառայում դրանց համար:

Այսպիսով, սահմանները կարող են մարել կից շրջանների փոխհարաբերությունները կամ նպաստել դրանց զարգացմանը: Այս երկու դիալեկտիկորեն կապված գործընթացները ժամանակի և տարածության մեջ ի հայտ են գալիս որոշակի հերթականությամբ [12]:

Ինչպես գիտենք, սահմանների օգնությամբ ամբողջականությունը տրոհվում է մասերի: Սակայն դա կատարվում է երկու ձևով: Մի դեպքում բոլոր մարզերն էլ հաշվվում են ամբողջականության իրավահավասար մասեր, մեկ այլ դեպքում միավոր օբյեկտն առանձնացվում է իր միջավայրից, իր շրջակայքից, որը կարող է լինել անորոշ չափերի, անգամ անսահման [9]: Առաջին դեպքը ընդունված է կոչել սահմանազատում, իսկ երկրորդը՝ պարփակում: Առաջին դեպքում սահմանային զոնան չի պատկանում սահմանազատված շրջաններից և ոչ մեկին, իսկ գիծը՝ երկուսինն է, երկրորդ դեպքում սահմանը պատկանում է պարփակող օբյեկտին, ինչպես պատյանը մարմնին:

Շատ լիմոլոգներ սահմանների առաջացումը կապում են տարածքի դիֆերենցման, տարաբաժանման գործընթացի հետ, որի հետևանքով ձևավորված սահմանները տարբերվում են, քանի որ տարաբաժանվող մարմինները տարբեր խտություն ունեն [5]:

Պատկերացնենք մի տարածություն, որը կազմված է իրար շատ մոտ և համարյա միանման մարմիններից: Դրանց միջև ընկած սահմանները Ռոդոմանը [11] անվանել է էքստրեմալ, քանի որ տարածքի պրոֆիլում դրանք դիտվում են որպես էքստրեմումի կետեր: Օրինակ, էքստրեմալ են գետային ավազանների, սոցիալ-տնտեսական հանգույցների շրջանների, հողակտորների, նաև պետական սահմանները:

Էքստրեմալ սահմաններով բաժանված շրջանների միջև էական բովանդակային տարբերությունները պարտադիր չեն: Սահմաններն արտահայտում են միայն դրանց անհատականությունը և տարբեր դիրքադրությունը: Ֆունկցիոնալ առումով և ֆիզիկապես շրջանները կարող են լինել միատեսակ: Եթե

տարբերություններ էլ կան. ապա դրանք չեն շրջանների առանձնացման պատճառը:

Սահմանների մյուս տիպը շեմքայինն է [11]: Դրանք ընկած են որակապես տարբեր օբյեկտների միջև: Այսպիսին են. օրինակ. ջրային ավազանի ափագիծը. անտառի եզրագիծը. բնակավայրի արտաքին կամ ներքին ֆունկցիոնալ մասերի. բուսական համակցությունների սահմանները:

Աշխարհագրական տարածքի տարանջատման համար կիրառվում է սահմանների երրորդ կոնֆիգուրացիոն կոչվող տիպը ևս: Կոնֆիգուրացիոն սահմանը պայմանականորեն կարելի է աշխարհագրական սահման համարել. քանի որ այն սովորաբար քարտեզի վրա չի գծագրվում և հետազոտողի կամ ընթերցողի կողմից կարող է պատկերացվել մտովին և ծառայում է ընդհանուր կողմնորոշման կամ ինչ-որ երևույթի վիճակագրության համար:

Կոնֆիգուրացիոն սահմանների դերը կարող են կատարել նաև ֆիզիկական գծերը և գծային նշանները. որոնք առկա են քարտեզում. բայց անտարբեր են քարտեզագրական տեղանքի որակական հատկանիշների նկատմամբ:

Լայն կիրառություն ունի աշխարհագրական սահմանների դասակարգումը ըստ բարդության:

Առանձնացվում է սահմանների երկու դաս՝ պարզ կամ տարրական. և բարդ:

Պարզ (տարրական) սահմանները բնության մեջ կամ քարտեզի վրա հանդես են գալիս մաքուր. զտված տեսքով. տարաբաժանում են միայն մեկ երևույթ և չեն համընկնում մեկ այլ սահմանի հետ և չեն խառնվում դրան: Դրան հակառակ. բարդ սահմանները իրենց բնույթով համալիր են: Բարդ սահմանների օրինակ են բոլոր տեսակի տնտեսական շրջանների. արդյունաբերական հանգույցների. տարածքային արտադրական բարդ համալիրների. տարբեր բնույթի հինդերլանդների (սոցիալ-տնտեսական առումով դեպի ինչ-որ մի կենտրոն ձգվող տարածք). ինչպես նաև վարչաքաղաքական և պետական սահմանները [10]:

Բարդ սահմանը կարող է լինել բաղադրյալ. երբ բաղկացած է տարբեր հատվածների տարբեր տիպի սահմաններից. խառն. երբ տարբեր տիպի սահմանները ձգվածության դիտվող հատվածում համընկնում են. կլանված են շրջանցման այդ նույն ցանցի ավելի բարձր դասի սահմանի կողմից կամ արտամղված են գետի կամ ծովեզրի կողմից:

Իրականում աշխարհագրական սահմանների մեծ մասը բարդ են: Պարզ սահմաններ գոյություն ունեն միայն տեսական մոդելներում: Օրինակ. պետական սահմանի ցանկացած կտոր ոչ միայն պետություն է անջատում. այլ նաև կից հողահանդակներ. բնակավայրեր ու տարածքային միավորներ: Դրանց սահմանները կլանված են պետական սահմանի կողմից: Շատ հաճախ պետական (քաղաքական) սահմանի կողմից կլանվում են տնտեսական. էթնիկական. պատմամշակութային և նման տիպի այլ սահմաններ ևս [3]:

Առանձին խումբ են կազմում գծային օբյեկտները՝ լեռնաշղթաները. գետահունները. երկրակեղևի ճեղքվածքները և այլն. որոնք ներփակ չեն. որևէ օբյեկտ չեն օղակում: Դրանք իրենց ծայրամասերում «մարում». «խեղդվում» են: Այդպիսի սահմանները ընդունված է կոչել կեղծ սահմաններ: Կեղծ սահմանները ինքնուրույն իմացական արժեք ներկայացնելուց բացի օգտագործվում են իսկական. ներփակ սահմանները «կառուցելու» համար. որ կատարվում է աշխարհագրական տարածքի շրջանցման տրամաբանության հիման վրա: Բանն այն է. որ բնության մեջ առկա տեսանելի ու շոշափելի սահմաններից բացի գոյություն ունեն նաև շրջանցման ժամանակ և շրջանցման նպատակով անցկացվող սահմաններ. որոնք կարող են լինել ինքնուրույն կամ զուգորդական:

Վերջում հարկ է ընդգծել. որ աշխարհագրական սահմանները որպես գիտական կատեգորիա են հանդես գալիս տեսական աշխարհագրության. ինչպես նաև աշխարհագրական գիտության ամբողջ համակարգի և դրա բոլոր ենթահամակարգերի ու ավելի ցածր կարգի բաղադրիչների համար: Դրանց

հետազոտությունը ձեռք է բերել ոչ միայն գիտատեսական, այլև ակնհայտ կիրառական նշանակություն:

Քանի որ աշխարհագրությունը գիտություն է տարածական տարբերությունների մասին, իսկ տարածական տարբերությունները ռեալ են դառնում սահմանների միջոցով, ապա դրանց բացահայտումը անհրաժեշտ է դառնում մի կողմից գիտական ճանաչողության խորացման, մյուս կողմից ինֆորմացիայի հավաքման ու համակարգման համար [2]:

Ներկայումս ձևավորված է աշխարհագրական սահմանների ուսումնասիրությունների երկու գլխավոր ուղղություն՝

ա) սահմանները դիտվում են որպես աշխարհագրական պրոցեսի հետևանք.

բ) սահմանները դիտվում են որպես աշխարհագրական պրոցեսի վրա ազդող գործոն:

Առաջնակարգ նշանակություն է ձեռք բերում աշխարհագրական սահմանների փոփոխությունների կանխատեսումը որպես ընդհանրապես աշխարհագրական կանխատեսման կարևոր մաս:

Միաժամանակ ակնհայտ է, որ գիտությունը դեռևս չի կարողանում սահմանները դիտել որպես անկախ ձևավորումներ և ուսումնասիրել դրանք, անտեսելով շրջանները: Գիտատեսական այդ խնդիրը դեռևս սպասում է իր լուծմանը, եթե համարենք, որ դա ընդհանրապես լուծելի է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Атлас сельского хозяйства Армянской ССР, Минск, 1984, 190 с.
2. **Гегель Г.** Энциклопедия философских наук, М.: 1974, 452 с.
3. **Исаченко А.Г.** Основы ландшафтоведения и физико-географическое районирование. М.: 1965, 327 с.
4. **Каганский В.Л., Казанцев Н.Н.** О специфике языка картоидов. – В кн.: Новое в тематике, содержании и методах составления экономических карт. М.: 1979, с. 43-47.
5. **Каганский В.Л.** Географические границы: противоречия и парадоксы. – В кн.: Географические границы. М.: 1982, с. 7-19.
6. **Куприянова Г.П.** Принципы и методы физико-географического районирования с применением ЭВМ. М.: 1977, 176 с.
7. **Преображенская В.С.** Феномен географии (раздумья географа). – Изв. АН СССР, серия геогр., 1979, №4, с.20-27.
8. **Родоман Б.Б.** Логические и картографические формы районирования и задачи их изучения. – Изв. АН СССР, серия геогр., 1965, №2, с.62-72.
9. **Родоман Б.Б.** Основные процессы пространственной дифференциации. Вестник МГУ, серия геогр., 1970, №25, с.22-36.
10. **Родоман Б.Б.** Районирование как средство географической характеристики: его логические формы и изображения на карте. Автореф. канд. дисс. М.: МГУ, 1966, 20 с.
11. **Родоман Б.Б.** Географические картоиды. – В кн.: Теория и методика экономико-географических исследований. М.: 1977, с.15-33.
12. **Сочава В.В.** Геоботаническое картографирование. М.: 1978, 86 с.
13. **Шувалов В.Е.** Географическая граница как фактор районирования. – В кн.: Географические границы, М.: 1982, с.33-38.
14. Հայկական ՍՍՀ աշխարհագրական ատլաս, Մոսկվա-Երևան, 1976 թ., 48 էջ:
15. **Վալեսյան Լ.Հ.** Հայկական ՍՍՀ տնտեսական և սոցիալական աշխարհագրություն, Երևան, 1988 թ., 455 էջ: